Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

ՄԱՄԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂԻ «Ի ԾՆՈՒՆԴՆ ՓՐԿՉԻՆ» ՃԱՌԸ

Ե դարի հայ եկեղեցական մատենագրության մեջ իր ուրույն տեղն ունի Մամբրե Վերծանողը, որ, ըստ Էական գրքի, Մովսես Խորենացու կրտսեր եղբայրն էր[1]: Ցավոք սրանից զատ նրա մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Դատելով Մամբրեի անվամբ հայտնի երկերից, նա եղել է խոսքարվեստի նրբություններին քաջատեղյակ մի հեղինակ և, ինչպես երևում է, իր գործուն մասնակցությունն է բերել հայ թարգմանական գործին: Ըստ մասնագետների, նրա մատենագրությունը պատկանում է հայ վաղ միջնադարյան մշակույթի մեջ կարևորագույն դեր կատարած հունաբան դպրոցի առաջին փուլին (450-ականից 480-ական թթ.)[2]:

Հրատարակությամբ հայտնի են Մամբրե Վերծանողի «Ճառ ի Յարութիւնն Ղազարու», «Ճառ ի գալուստն Տեառն յԵրուսաղէմ», «Յաղագս եկաւորութեան Փրկչին յԵրուսաղէմ», ճառերը[3]: «Վերծանող» մականունը վկայում է, որ Մամբրեն զբաղվել է ոչ միայն թարգմանական, այլև մեկնաբանական գործունեությամբ: Եվ իրապես, ձեռագրերում նրա անվամբ հայտնի է «Դատումն Քերդածաց» խորագրով մի գործ, որ, ինչպես երևում է, Մամբրե Վերծանողի մեզ ամբողջապես չհասած Մեկնութիւն Քերականի երկի մեկ հատվածն է[4]: Ձեռագիր մատյաններն անուղղակիորեն հաստատում են, որ մեր հեղինակը իրազեկ է եղել դարաշրջանը հուզող իմաստասիրական խնդիրներին: Այդ է ցույց տալիս Մաշտոցի անվան Մատենադարանի № 1555 ձեռագրում զետեղված (թերթ 285ա—290ա) «Հարցմունք Մամբրէի, որ գիտակ էր արտին փիլիսոփայութեան և պատասխանիք Դաւթի եռամեծի և Անյաղթ փիլիսոփայի» (Հրց. Զի՞նչ են սահման մարդագոյին: Պտխ. Սկիզբն յերակաց աճելութիւն...») միավորը, որ ամենայն հավանականությամբ հիմնված է մի վաղնջական ավանդության վրա:

---

[1] **Ն. եպս. Պողարեան,** Հայ գրողներ. Ե—ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 21:

[2] **С. С. Аревшатян,** Формирование философской науки в Древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, с. 154.

[3] Կորիւն վարդապետի, Մամբրե վերածնողի, Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 35—54 (տարբեր խմբ. 55—75), 76—87, 88—93:

[4] **Ն. եպս. Պողարեան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ, Երուսաղեմ, 1963, էջ 558:

Մամբրե Վերծանողի անվամբ մեզ է հասել նաև մի ճառ, որ կրում է «Մամբրէի Վերծանողի ի Ծնունդն Փրկչին ասացեալ և ի ծնունդ Նորին Ութ աւուրն, այդ է՝ Մկրտութիւն» խորագիրը: Այն, որ այս ճառն իրապես պատկանում է Մամբրե Վերծանողի գրչին, հաստատվում է ոչ միայն խորագրի պարզ ու մեկին տեղեկությամբ, այլև լեզվառճական տվյալներով: Խնդրո առարկա ճառում կենցաղավարում են մի շարք բառեր, որոնք առկա են Մամբրե Վերծանողի հայտնի ճառերում միայն: Այդպիսիներից են, օրինակ, «արարչեղէն», «կարապետական», «քաջաձայնապէս» («քաջաձայնաբար») բառերը, որոնք Նոր Հայկազյան բառարանը վկայաբերում է Մամբրեի անունով[5]: Ինչպես հեղինակի անվամբ հայտնի ձեռագրում, այստեղ ևս կիրառված են հունաբան հայերենին բնորոշ ձևեր ու դարձվածքներ: Ճառը երևան է հանում ոչ միայն մեկնաբանական արվեստի օրենքներին քաջագիտակ հեղինակին, այլև՝ հմուտ բառաշինարարին: Այստեղ առկա են գլխավորապես հունաբան հայերենի հետևողությամբ հորինված բառային միավորներ, որոնք բացակայում են նոր Հայկազյան բառարանում. **անյանցապէս, անպատկառաբան, առաւելաբեր, աստուածատեսաբար, աւազանացեալ, աղբիւրախաղացք, բացածաւալումն, գիշերացելում, կարապետագոչումն, կանխատօնակք, համափառաբար, ճանապարհակազմութիւն, մարգարէաբանել, մարմնակերպութիւն, նախանձաբերք, ոլորտական, սիրագոյն, պասեքական, վայրագապէս** (վայրագաբար)[6], **տարահանեալ, տրամացեալ, օդաղօղակ:**

Մամբրե Վերծանողի այս Ճառն իր որոշակի ազդեցությունն է ունեցել հայ հետագա մատենագրության վրա: Այդ մասին են վկայում Մամբրեի երկում առկա այն բառերն ու արտահայտությունները, որոնք կիրառված են Սահակ Զորափորեցի Կաթողիկոսի (677—703 թթ.) «ՅԱրմաւենեանցն օր» ճառում: Այլուստ մեզ անհայտ այդ միավորներից են. «գրաւորական»[7], «երաժշտապետն Դաւիթ»[6], «եկաւորել» («եկաւորութիւն»)[9], «հասարակաց Ադարիչ»[10] և այլն: Այդ ազդեցությունը երևում է նաև հետևյալ զուգադրությամբ.

Մամբրե Վերծանող	Սահակ Զորափորեցի
«... Ուստի սկզբնաւորեալ զտէրունական կատարէր աքանչելագործութիւնս և **զաստուածացեալ հակառակամարտն ի տիեզերապետութենէ լուծեալ** արտաքս ընկենոյր...»:	«Նշանակէ **զաստուածացելոյ հակառակամարտին** ճոխութիւն ի **տիեզերապետութենէ լուծանել** ընդ ոտիք մեռուցէ...»[11]:

[5] «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 341, 1064, Հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 985:

[6] Տե՛ս «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Հտ. Բ, էջ 778:

[7] Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 186, 187, 190:

[8] Անդ, էջ 186:

[9] Անդ, էջ 187, 189, 192:

[10] Անդ, էջ 192:

[11] Անդ, էջ 189:

Մամբրե Վերծանողի տակավին անտիպ այս ճառը մեզ է հասել միակ ընդօրինակությամբ, որ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 1798 ձեռագրում (թերթ 440ա—449ա): Ստորև ներկայացնում ենք ձեռագրիս ամփոփ նկարագրությունը՝ օգտվելով նրա ընդարձակ նկարագրությունից, որ կատարել է Օ. Եգանյանը.

Ժողովածոյ: Ժամանակ՝ ԺԷ դ.: **Գրիչ՝** Պօղոս: **Թերթ՝** 456+1 (կրկ. 187): **Պրակ՝** Ա—ԼԸ×12 (Ա 13): **Նիւթ՝** թուղթ, արևելեան: **Մեծութիւն՝** 19,6×13: **Գրութիւն՝** միասիւն: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 24: **Կազմ՝** դրոշմազարդ, բալագոյն կաշի:

Բովանդակութիւն

Ա. 2բ—46ա Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի վասն մարմնա[նա]լոյ Միածնին:

Բ. 46ա—321ա Թուղթք և Ճառք Կիւրղի Աղեքսանդրացւոյ

Գ. 288ա—299բ [Բանք Թէոդոսի Անկիւրացւոյ]

Դ. 321ա—453ա [Ճառք Աթանասի Աղեքսանդրացւոյ, Բարսղի Կեսարացւոյ, Գրիգորի Աստուածաբանի, Յովհաննու Ոսկեբերանի, Մամբրէի Վերծանողի, Անտիպատրոսի Բոստրացւոյ]:

Մամբրէի Վերծանողի ի Ծնունդն Փրկչին ասացեալ և ի ծնունդ նորին Ութ աւուրն, այդ է՝ Մկրտութիւն[1*]

Լոյս փայլեալ ի լուսոյ սիրողացն զլոյսն պայծառացուցանէ զտեսութիւն, իսկ երկնային և արարչական լոյս ծագեալ զըն(440բ)դհանուր[2*] տիեզերս: Լոյս էր օրէնն, «պատուիրանք Տեառն լոյս են և լուսաւորեն զաչս»[1] գրաւոյ սականին (sic) երաժշտապետն խոստովանեաց Դաւիթ: Լոյս էր և Յովհաննու կարապետական մկրտութիւն և մաքրէր զյանցմանց խոստովանութեամբ և զմարմինս ջրոյ լըլուացարանաւ և վերագոյն քան զքահանայական մկրտութիւնս էր: Լոյս Իսրայէլի՝ աստուածեղէն յայտնութիւն և մկրտութիւն: Սա է վերագոյն լոյսն և նախաճառեալ լուսաւորութեանցն լուսոյ լոյս, քանզի երրեակ զանազանութեամբ Բան ի ծոցոյ երևեալ Հօր նախ ի մարգարէական նշոյլափայլ լուսաւորութեամբ ի գիշերացելում բազմաստուածութեան զեկաւորելն գուշակէր:

Երկրորդ՝ զաստուածեղեն և զմարմնաւոր ծնունդ յանապական Կուսէ ծնանելով հաւատարմացուցանէր զնախահարցն կանխագուշակ տեսութիւնս, որք զԿուսին յղութիւն, ի Բեղղեէմ զծնունդն, զփախչիլն յԵգիպտոս և զԲանն տնօրինեալ և աստուածաբար ընդ մեզ կենցաղավարեցեալ բացայայտնեցին արարչական հոգվն երրեակ յայտնութիւնս տիրապես և աստուածա//(441ա)-բար: Եւ գերազանցեալ զերկու[ն]քն՝ ճոխանա առաւելաբեր շնորհիւ, վասընզի ճշմարտապէս զբնութիւնս գաղափարեաց, իսկ բնաւորութենէ բնութեանս առնէ սկիզբն զծնելութիւն և զերեսներեակ ներէ ժամանակս, յորս

[1*] Մկրտութիւն՝ լուսանցքում:

[2*] **Ձեռ.** զնթանուր:

[1] Սաղ. ԺԸ 9:

լուէր զարարչեղէն սքանչելագործել հրաշս, զի մի խակ և տարաժամ երևեսցի օրինակացն վարդապետելն, լուծանէր զնախանձաբերացն զպատճառս և, աւարտեալ զմարմնաւոր տիոցն սահման, զչարակնողացն կտրէր զհակառակասէր կամսն: Վասնզի յանցաւորութեան յառաջին մարդոյն սակս զյանցաւորի տպաւորի պատկեր երիտասարդական նախաստեղծին տիօք յայտնէր զաստուածային երևումնն, զի յերկուց տարացուցական վկայից արարչեղէն հաւատարմացի բարեբանեալ յայտնութիւնս, քանզի ստուգապէս մարմնանայր Բանն՝ բովանդակ մարդկեղէն մասանց ողջ զկարգն պահելով: Եւ դաստիարակութեամբ Կուսին զտողայութիւն հաւատայր և հասարակաց բնաւորութեան աղբիւրն գոլով ի տղայական տիս պատճառէր զանբանութիւնս և ըստ օրինականին անվանէր աւանդիւք//(441բ) թլփատեալ յութերորդումն ի քառասներորդումն արեամբ աղաւնեաց ի տաճարի լինի յանդիման: Այսպէս և յերեսներորդումն ի Յովհաննէ մկրտի և զհամօրէն գրաւոր ականին ժողովարանին աւարտէ զաւանդն, զի մախացողքն անբանաւացին ի հայհոյական պատճառէ պանծացողքն յօրէնս, քանզի կարապետութիւն Յովհաննու մաքրէր զոգի և զմարմին մարդկեղէն բնութեանս և մարմնացելումն յերկրի աստուածապէս ուղիղ ճանապարհ զմաքրութիւն ոգւոյ և մարմնոյ օրինական ժողովարանին առնէր: Եւ «ձայն բարբառոյ յանապատի»[2] ասելով ձայն հնչողական զնախահրաւէր զյառաջագուշակ զիւր կոչումն ասէ և անապատ զանյայտ և զանսկզբնաւորեալ քարոզութիւն առաքելոցն ասէր և ես անապատ, քանզի ի քաղաքս և ի դրունս թագաւորաց մարգարէաբանեցին սուրբ հարքն: Իսկ մեծն Յովհաննէս յամայացելում վայրի ի Սաղիմա և Յորդանանու եզերս վայրագապէս բացօթեա գնայր և քաջաձայնաբար հնչելով. «Զապաշխարեցէք, հասեալ է արքայութիւն երկնից»[3] //(442ա) ապաշխարել ի զղջումն յանցաւորութեանց մկրտելոցն յինքենէ, ասէ, և արքայութիւն՝ զՅիսուսի Աստուածութիւն, որ ի մկրտութեան իւրում զյարարչական յայտնէր զօրութիւն և ընդ տիեզերս հասարակաց Հօրն հանել զօրութիւն Սուրբ Հոգին Յիսուսի խոստովանէր և նոյնինքն Մկրտիչն յեկաւորիլն ի մկրտութիւն ասէ: Սա Գառն Աստուծոյ և բովանդակ մարդկեղէն մեղաց բարձօղ և զմկրտելն պատկառէր յաստուածային սոսկացեալ կիզմանէ զծառայական առ նա ճառեալ ասէ բանս: Ինչ ի հասարակաց կենդանագործեղ պարտ է մկրտիլ, և զանճառելի արարչութիւնդ ընդ արարածոյս նուաստացուցանես բնութեամբ: Ինձ օրէն է առ քեզ գալ՝ առ տուողդ զՍուրբ Հոգիդ, առ վերածնիչ զտիեզերս յորդեգրութիւն երկնային Հօրն և առ գրողդ զանուանս ի կենդանենաց դպրութիւն: Տուիչդ զՀոգի Սուրբ, առ իս գաս, որ ոչ ծանեար զմեղս և կիզուս զմարդկեղէն անօրէնութիւնս[3*], Արարիչդ արարածոց, նուաստանաս նիւթոյս՝ ճարտարապետդ, ծառայիս՝ Տէրդ, երկնային արքայութիւնդ՝ կարապետականիս, Աստուածդ՝ մարդոյս, հոգոյդ տուողի՝ յապաշխարութիւն// (442բ) Մկրտչիս, Տէրդ՝ սպասաւորիս, ոչ փորձեցայց ասէ ծախելի բնութեամբս ի հրեղէն բնութիւնդ հպիլ, զի հուր ծախիչ ես Աստուածդ մեր, զնմանն Պետրոսի խոստովանեալ ի պաշեքական ընթրելն, յոռում հրաժարէր մեծն առաքելոցն ի յաստուածեղէն սպասաւորութենէ ի ծախելի սոսկացեալ բնութենէն:

---

[2] Յովհ. Ա 23:

[3] Մատթ. Գ 2, Դ 17:

[3*] ան-ը լուսանցքում։

Աստ Յովհաննէս պատկառէր զարարչական գագաթամբն ածել ջուր, անդ Պետրոս սոսկացեալ զտէրունեան ձեռացն սպասաւորել ոտնալուայութիւն: Աստ արարչական պատասխանեալ բան ասէ. «Այժմ այս պարտ է կատարել»[4]: Անդ ասէ. Թէ ոչ աստուածային լուացից զոտսդ ձեռօքս, ոչ ընդ իս զորդեգրութեան ընկալցիս շնորհս և ծառայապէս հնազանդեալ երկաքանչիւրոց: Աստ Յովհաննէս ի հրամանէն հարկաւոր էր մատուցեալ սարսափմամբ ածէր ջուր զաստուածեղէն գլխովն: Անդ Պետրոս ծառայապէս զոտսն առաջի տէրունեանն ունելով սոսկայր զարարչական ձեռացն հարկանել: Եւ քանզի յայտնութեան խորհուրդս, որ առնէ ի մկրտութենէ սկիզբն, մկրտի Յովհաննէս ոչ ըստ կարապետագոչմանն, թէ ուղիղ զձեզ արարչեղէն ճանա//(443ա)պարհին կազմեցէք հետևելոցն ի ձեր մարմնի և յոգւոջ ի մաքուր վարս:

Արդ, հասարակաց Արարիչն որում վերագունի քան զինքն մաքրեացէ զանձն, զի եթէ Յովաննէս նորա սակս քաջաձայնէ, թէ յարմարեցէք զտէրունեան պողոտա[4*], յորմէ՞ պատկառեալ բոլորեցուն Արարիչն հայցէ զմկրտութիւնն ի խոստովանութեանց կարապետիս յայտ է. ես ի քէն հայցեմ զմկրտութիւն ի տուողէդ զմաքուր հոգի ի հոգևորականէդ գրաւորականս ի հոգւոյդ և ի հրոյ յապաշխարութիւն կարապետիս և ի վերա ծնօղէդ աւազանաւ յորդէգրութիւն ի խոստովանութիւն և ի մարմնոյ մաքրութիւն լուացիչս. ոչ ասէ ոգոյ և մարմնոյ սակս մաքրութեան և կամ վերագունի քան զիս իջելոյ Տեառն ի քէն մկրտիմ: Այլ զբովանդակ կնքեցից կարապետական[5*] մկրտութեամբդ և սկզբնաւորեցից[6*] զիմ աւետարանականս յայտնապէս և ի մկրտութենէն սոսկ գրով զմկրտելն յորդէգրութիւն հրամայեցից և կոչեցից արարչապէս զմկրտեալսն յապաշխարութիւն մկրտիլ ի Հոգիս Սուրբ և ի հուր և աստուածային յայտնութիւնս ասէ երկուք[7*] հաւատարմացի՝ վկայիւք: Յերկնուստ Հօր բացարձակելով ձայն. «Դայ է իմ Որդի սիրելի»[5], դովաւ ընդ աշ//(443բ)խարհի հաճեցայ և յերկրէ ճշմարիտ կարապետդ ասելով. «Սա գառն Աստուծոյ և տիեզերաց բարձօղ մեղաց և զաշակերտեալսդ քո կարապետականիդ կորզեցից յիմ աւետարանականի սպասաւորութիւն արարչաբար: Վասնզի երկուք վկայիւք հօր արարչականաւն և Յովաննու կարապետականաւն և երիտասարդական տիօք Յիսուս կնքէ զօրէնն գրաւորական և զհոգևորական յայտնէ աստուածապէս և զմկրտութիւն Յովաննու, որ ի վեր քան զքահանայականն էր փոխէ զգիրն ի հոգի յաւետարանական զկարապետականն զծառայականն ի տիրականն և յաստուածեղէն զմարդկապէսն: Քանզի ճրագ զՅովհաննէս զտէրունեան խոստովանեաց բերանն և զինքն արեգակն և զօրինականաց ժողովարան տար օրէնութիւն գիշեր և զեկեալսն ի սադովկացոցն և ի փարիսականացն ի մկրտութիւն խնդալ ասէ ի նորա ջահաւոր կարապետութեան և զիւր եկաւորիլն ի մկրտութիւն արեգական ելս և որպէս լուսաւոր ի գիշերի լուցմանէ ճրագի. այնպէս և նեմաւոր օրինականին մանկունք Յովաննու խնդացին կարապետութեամբն: Իսկ յորժամ // (444ա) ճշմարիտ արեգակն Յիսուս եկեալ յիւր[8*] մկրտութիւն

---

[4] Մատթ. Գ 15:

[4*] **Զեռ.** պողատա:

[5*] **Զեռ.** կարապետիգական:

[6*] **Զեռ.** սկիզբնաւորեցից:

[7*] **Այստեղ և հետագայում ձեռ.** Բ-ուք:

[8*] Զեռ. յի

[5] Մատթ. Գ 17:

և վկայեալ ի Հօրէ զարեգակնափայլ յայտնէ զվարդապետութիւն նուաստանա կարապետական ճրագն Յովհաննու արեգակնափայլ Յիսուսի աւետարանական վարդապետական և տեղի տա ծառայականն արարչականին որպէս. ճրագ արեգականին, վասնզի բազում ասելով Որդիս Հօրն երկնաւորի, քանզի կոչէ որդիս զհրեշտակս և անդրանիկս զԻսրաէլ ի մարդկեղէն ազգաց և որդիս պարարտութեամբ՝ զքահանայութիւն և զթագաւորութիւն: Այսպէս զմկրտեալս ի սուրբ աւազանէ կոչէ որդիս: Իսկ ճշմարիտ որդի արարչակից Բանն ի ծոցոյ հայրենի բնութեան անորոշաբար մարմնացեալ և սիրագոյն քան զամենայն զարարչակից համափառութենէն ասէ և նովաւ ընդ աշխարհի հաճեալ, զի ոչ հայրապետութիւն և մարգարէութիւն կամ քահանայական և Յովհաննու կարապետական մկրտութիւն զհայր ընդ[9*] աշխարհի կարողացեալ հաճել բա[յ]ց միայն Միածինն համափառ և համագոյ Հօր և Սրբոյ Հոգւոյ աստուածեղեն յայտնութեամբ հաշտեցուցանել ըստ արարածս զԱրարիչն և զմիջնորմն քակէր զառաջին մարդոյն պատուիրազանցութիւն և զհրեշտակաց և զմարդկան խառնել զաստուած//(444բ)եղէն բարեբանութիւն: Զի՞նչ մեզ Սրբոյ Հոգւոյն աղաւնակերպիլն ի տերունական մկրտութիւն: Նախ զի զծնեալն ի ջրոյ ի մկրտել Աստուածութեան ի ջուրս ապաստաւորեացէ: Երկրորդ՝ արարածոց Յիսուսի անդրանիկն յերկրէ թռչուն ծառայապէս ապաստաւորեացէ Երրեակ՝ վասնզի երկնային և արագաշարժ Սրբոյ Հոգւոյ արբանէկէր օդաղօղակ բնութիւն արագագոյն քան զամենայն կենդանիս հաստատ նայէ զծառայութիւն ըստ Յովհաննու ձայնին՝ Տեսանէի զՀոգին Սուրբ իջեալ աղաւնակերպ յերկնուստ և վերայ աստուածային իջեալ և հանգուցեալ գլխոյն, վասնզի նիւթեղէն բնութեանն համագոյակից վկայաբանէն: Իսկ տէրունականն և ազատ արարչակից Սուրբ Հոգին, քանզի ով յեղելոց զանեղին ծանիցէ. մարմնակերպութիւն, բայց նոյն ինքն մաքուր Հոգին համափառ և յանորոշ մի իշխանութեամբ: Քանզի երիտասարդացեալ աստուածային Բանն անճառելի բնութեամբ ճառելիք Հոգւոյն համագոյութեան անեղին լինին և ի մկրտութիւն տպաւորէր զպատկեր: Զի որպէս յանցաւորի առաջին մարդոյն կեր//-(445ա)պարանակցեաց[10*] անյանցապէս, այսպէս և անյանց[11*] գոլով մկրտի յանցաւորաբար, զի զմեղուցելոցն քաւեացէ զյանանցս, վասնքի «անդրանիկ ամենայն արարածոց» զնա խոստովանեաց Պօղոս[6]: Զի որ ըստ Աստուածութեան անսկիզբն էր, մարմնանալովն եղանիւր սկզբնաւոր և զծնեալն զկնի ժամանակաց լիներ անդրանիկ արարածոց յաղագս անսկիզբն Աստուածութեան, զի Արարչին և արարածոց անդրանկին յերկնային մասանց անդրանկին ջուրք յառաջեացեն զծառայապէսն ապաստաւորել, քանզի ջուր էր, որ ի[12*] սկզբանն յերկուս որոշէր տեսակս զերկիր ուրտական պարունակութեամբ և զերկին հարթածաւալ ի վերայ տրամացելոց հաստատութեանս: Եւ վասն երևեցելոյ զինքն Աստուած ի ձեռն ջրոյ. ջուրք զմկրտութիւն ապաստաւորեացեն Որդոյն Միածնի: Յորմէ առեալ իշխանութեան սկիզբն յորդեգրութիւն զտիեզերս վերածնեացեն Հօրն բոլորեցուն, քանզի ի ջուրն էր ի սկզբանն նախագոյացեալ և գրաւորականին թողութիւնս քաւիչ-

---

9* **Ձեռ.** ընտ:

10* **Ձեռ.** կերպանակցեաց:

11* ի-ն **լուսանցքում:**

12* ի-ն **լուսանցքում:**

6 Կող. Ա 15:

նայական արբանեկէր մաքրութեան և ի կարապետականին զմեղուցելոցն սրբէր զանմաքրութիւն: //(445բ) Իսկ ի տէրունական մկրտութեանն առնոյր իշխանութիւն ոչ սոսկ զմեղս քաւել, այլև յարարչական մասն ընդունել որդեգրապէս: Վասնզի երևելի լինելութեան և նախագոյ զջուրս Մովսէս մատէ և Աստուածայնոյն վերահետևիլ նախագուշակումն երիտասարդացելոյն Հօր[12*1] Բանին և արարածոց անդրանկացելոյ յայտնել զինքն աստուածատեսաբար տիեզերաց ի ջուրս և ջրով՝ զընդհանուր[13*] տիեզերս ի շնչաւորութենէ ծնանել հոգևորս, որում երաժշտապետն Դաւիթ յառաջատեսող մարգարէական եղեալ Հոգւով, ասէ. Ջուր որ ի վերայ քանզի երկինս օրհնեսցեն զանուն Տեառն, զի թեպէտ և երկրահոլով Յորդանանու վտակն խաղայր գերիվերոյ քան զերկին. էր յաղագս զնատեալն յերկնի և յերկրի[14*] ընդունել զմկրտութիւն յինքէնէ, և նատեալն յերկնի երկրային մարդ երիտասարդապէս և երկրաքարշ ջուրն գերիվերոյ երկնի յաղագս վերահետոյ զաստուածային մարմնովն: Նորուն աղագաւ անպատկառաբանն Եսայի ասէ. «Ահաւասիկ անուն Տեառն եկաւոր է յամեցեալ ամօք զկնի բազում ժամանա//(446ա)կաց», և յետ սակաւուց ի վերայ բերէ. «և Հոգի նորա, որպէս ջուր ծորալիր պարանոցաթաղ»[7]: Ի բովանդակել մարգարէութեանց և օրինին կնքել անուն տէրունական ծնելութեանն հասանէր առ Հերովդէս և քահանայապետն: Իսկ մկրտութեանն Յորդանանու պարանոցալիր ջրով Սուրբ Հոգին բացատրական ձայնիւ և Հօր համախոհութեամբ ասէ. «Դա է Որդի իմ սիրելի, դովաւ ընդ աշխարհի հաճեցայ»[8]: Քանզի ձորն զՅորդանանու խորութիւն, ասէ, և լրացեալ զոլորտական բացածաւալումն և պարանոցաթաղ ուսովք չափ զտէրունական մարմինն Յորդանանու պարածածկել ջրով և զանդուստ ի վեր կարապետական աջոյն պատկառաբար մկրտել, վասնզի ի հասարակաց տիեզերացս կորստեանն ջուր էր, որով երկրի վայելչութիւնք բառնայր աստուածային հրամանաւ: Իսկ աստ մարդասիրեալ նշան բարեգթութեան ի ջուրս յայտնել զերիտասարդացեալն Աստուած, զի իջմամբ ի ջուրս զառաջին անէծն, որ ի ջրոցն կնքեսցէ և զանշնչացուցիչ ջուրն ծընիչ յորդեգրութիւն փոխեսցէ // (446բ) և վասնզի անդրանիկ ի լինելութեան ջուր անդրանկի Որդւոյ սպասաւորեսցէ յերկուս մկրտութիւնս, ի տէրունականին՝ Յորդանանաւ և յառաքելականին՝ մաքուր աւազանաւ: Զայսպիսի ի[15*] ջրոց արարչային յայտնութիւն մեծն թագաւորաց Դաւիթ յառաջատէս Սրբով Հոգով եղեալ ասէ. «Գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ»[9]: Քանզի իջանելով Արարչին ի ջուրս տիեզերական խնդացին աղբիւրախաղացք վտակ, զի որպէս գոլով ի Յորդանան բովանդակապէս Աստուածութեամբն բոլորովիմբ էր ընդ[15*1] Հօր, այսպէս և իջանելով ի Յորդանան զբովանդակ լնոյր զջուրս: Վասնորոյ ընդ Յորդանան տիեզերական խնդացին ջուրք և ծափել ձեռօք զերկուս տօնել մկրտութիւն զտէրունական Յորդանանաւ և զառաքելականն՝ սրբով աւազանաւ: Իսկ ձեռօք ծափել երկատեսակ աջն զՅովանուն տէրունականն սպասաւորել մկրտութեան և զառաքելոցն, որ աւազանաւն նորածնէ որդիս հասարակաց Արարչին: Զի՞նչ մեզ ներելն Յիսուսի զվարդապետելն մինչ յերեսնեկեան լրումն ամաց և աներևելի // (447ա) զարարչեղէն հրաշս արգելաւորել: Քանզի երեսնամեանն բոլոր կատարե-

[12ա*] **Ձեռ.** յօր:
[13*] **Ձեռ.** զնթանուր:
[14*] **Ձեռ.** երկնի
[15*] ի-ն **լուսանցքում:**
[15ա*] **Ձեռ.** տ

[7] Եսայի, Լ 27, 28:
[8] Մատթ. Գ 17:
[9] Սաղ. ՂԵ 8

լութիւն մարմնոյ յինքեան բերելով հասակ ի լուացելոյ և զմարմնոյն աւարտելով սահման, զի կատարեցելով մարմնով երևեցուցէ զերկուս բնութիւնսն յինքեան բերելով անորիշ համագոյութեամբ, զի որպէս անճառելի Աստուածութեամբն էր ամենակատար, այսպէս և երևելի մարմնովն բոլորայարմար[16*] տիեզերաց զինքն յայտնեսցէ: Երկրորդ՝ զի երեսնամենեակն Յովաննու հանդերձեալ էր մկրտութեամբն յայտնել զուգահաւասար տիօք հանդիպէր Մկրտչին՝ զինքն նստան (sic) գոլ Կարապետին խնդրել զՄկրտելն երիտասարդ յերիտասարդէ, զի ըստ հարցմանցն և համագոյ վկայեսցէն տիքն, քանզի ի յատուկ տարջէ Եղիսաբէթ յամլութենէ յղացեալ և սուրբ կոյսն Գաբրիէլի աւետաբերութենէ: Այսպէս և երեսնամեան մարմնացեալ բանն յինքեան կարապետէն յերեսնամէն[17*] մկրտէր, զի մի աննման և ընդդէմ աստուծային յայտնութեան երևեսցի: Եւ ևս զի արութեան և քաջութեան ժամանակ երիտասարդականն է, զոր միաւորեալ ընդ արարչութեան // (447բ) յաղթող աստուածացեալ մարմնովն յայտնէր ի Յորդանան, ուստի սկզբնաւորեալ զտէրունական կատարէր սքանչելագործութիւնս և զաստուածացեալ հակառակամարտն ի տիեզերապետութենէ լուծեալ արտաքս ընկենոյր[18*]: Իսկ վեցերրեակ ամսօք անդրանկանալն Յովաննու քան զտէրունական տիսն կարապետական ճանապարհակազմութիւն էր, որ ոչ տեսլեամբ գիշերայնով, այլ տուընջենականաւ բացարձակ ձայնիւ հնչեալ ասէ. «Մաքուր զաստուածային պողոտա ի ձեզ կազմեցէք», զի ոչ բազմաժամանակեա եկաւորել խոստովանէր, այլ զհուպ և վեցերեակ[19*] ամսովք, քանզի ի յայտնելն զիւր կարապետելն վեցերևակ յառաջատէր ամսովք, յորում զկարապետական կատարէր սպասաւորութիւն երեսնամեան[20*] տիովք փոխէր ի մկրտել զերեսնամեան զհասարակաց Արարիչն Յիսուս: Զայսպիսի երիտասարդացեալ Աստուած հանճարափառն Սողոմոն յիւր իմաստնաւոր տաղսն գրեալ ասէ. «Զբուարճացիր երիտասարդ մանկական տիովք»[10]: Քանզի բնութիւն երիտասարդի եռանդնացեալ հասարակ միտք և մարմին // (448ա) առաքինոյն ի հոգևոր նահատակութիւնս: Այսպէս և երիտասարդացելոյ Հօր Բանին երեքտասնեան[21*] տիօք զինքն բացերևեցուցեալ տիեզերաց աստուածապէս արութեան և քաջութեան ժամանակօք, որովք զծովասոյզ վիշապին զինուորութիւնս շնչահեղձոյց մեռուցանէր ի մկրտութեան ջուրս, քանզի ուրախանալ զյայտնելն ասի ի Յորդանան և զՀոգւոյն Սրբոյ վկայելն յերկնուստ իջիւք և զտիեզերական ջրոյն ընդ Յորդանանու համաբերկրական խնդալ և տարերց կնքել զընդունայնութեան հնազանդիլն: Եւ երիտասարդական մանկութիւն զերեսներորդումն ասէ, յորում մահուամբ զտիեզերս ազատս ի մահուանէ փրկանաւորեաց: Եւ յարուցելովքն ի գերեզմանէն և տարահանեալ զինքն յերկին երկնի ամպեղեն կառօք և նստել ընդ աջմէ Հօր համապատուական նոյն մանկան տիօք մնա անփոփոխելի և տիեզերական խնդութեամբ միշտ խնդա երիտասարդապես: Վասնորոյ անճառելի և աստուածային յայտնութեան նախամեծար գոլով հրեշտակային բարեբանեսցուք երաժշտականութեամբ ընդ Սրբոյ Հոգւոյն միաբանեսցուք իջելոյն յերկն//(448բ)ուստ ի Հո-

---

16* **յարմար-ը՝ լուսանցքում:**

17* Ձեռ. յերեսնէմէն:

18* **Ձեռ.** յր-ը **լուսանցքում:**

19* **Ձեռ.** Զ-**երեակ:**

20* **Ձեռ** Լ-ամեան:

21* **Ձեռ.** Գ-տասնեան:

10 Ժող. ԺԱ 9:

րէ ընդ հաւատարիմ վկային երևեցելոյ աղաւնակերպ լուսափայլ և ուղղափառ առնելով զմիտս հերձուածողական աղանդոց: Յովհաննու խոստովանութեան ձայնակցեսցուք. «Ահա Գառն Աստուծոյ»[11] և տիեզերաց Բարձիչ մեղաց, զի թեպետ և ժամանակաւ եմք զկնի հաւատոց խոստովանութեամբ համաժամանակօք Կարապետին եղիցուք, տէրունական լիցուք երանիք, թէ կնիք զոչ տեսեալ մարմնաւոր ակամբք, տեսցուք հոգևոր բըբօք և հաւատոյ ուղղափառութեամբ ընդ Յորդանանու բերկրեսցուք՝ զմկրտութիւն զուարճանալով, ընդ տիեզերական գետս ձեռամբ ծափեսցուք ընդ աւազանեցելոցն համաշխարհապէս: Եղիցուք կանխատօնակք աստուածային ուրախացեալ յայտնութեամբ, վասնզի Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ ընդ երկրի, ցնծասցուք ընդ լռեցելոյն զընդունայնութեան հնազանդելն, ընդ տեսանողին զիւր Արարիչն յայտնութեամբն երևեալ Թագաւոր և զհակառակամարտին տէրութեան հանդերձ բազմաստուածութեամբ ընկեցեալ արտաքս: Վասնորոյ Հօրն բաւականի և Որդոյն Միածնի և մաքուր և ազատիչ Սուրբ // (449ա) Հոգւոյն երից անձնաւորութեանց և մին անորիշ Աստուածութեան պանծալի երկրպագութիւն և մշտնջենաւոր փառաբանութիւն, պատիւ և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից:

---

[11] Յովհ. Ա 29: